## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

● 30 Յուլիս Շբ. — Յետ-միջօրէի, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը «Հրաշափառ»ի հանդիսութեամբ մուտք գործեց Ս. Յակոբեանց Մայր Տաճարը և Նախագահեց երեկոյեան պաշտամունքին և վաղուայ տօնի նախատօնակին։

● 31 Յուլիս Կիր. — Տօն Այլակերպութեան Տեառն. զԿնի առաւօտեան պաշտամունքին հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ. ժամարարն էր Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան որ նաև քարոզեց բնաբան ունենալով «Ճանապարհ փառաց չարչարանքն է»։ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ Ս. Պատարագին և Նախագահեց հոգեհանգստեան պաշտամունքին։

● 7 Օգոս. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր Բ. Գողգոթայի մատրան մէջ. ժամարարն էր Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան։

● 14 Օգոս. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ. պատարագեց և քարոզեց Գեր. Տ. Դերենիկ Եպս. Փոլատեան։

● 15 Օգոս. Բշ. — Այսօր սկսան Ս. Աստուածածնայ տօնին տասնեհինգօրեայ հանդիսաւոր պատարագները, մասնակցութեամբ հոգ. հայրերու և ժառանգաւոր սաներու։

---

### ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ
### Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ

Կիրակի 7 Օգոս. յ. մ. ժամը 4ին ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Նախակրթարանի ամավերջի հանդէսը, Նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր։ Յայտագիրը կը բաղկանար մեներգներէ, արտասանութիւններէ, ճառերէ, խմբերգներէ և այլն։ Հանդէսի աւարտին դպրոցի տեսուչ Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան կարդաց իր տարեկան տեղեկագիրը, որմէ ետք տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւն և 1948, 1949 տարիներու շրջանաւարտ սան-սանուհիներու վկայականաց բաշխումը, ձեռամբ Նորին Ամենապատուութիւն Ս. Պատրիարք Հօր, որ նոյն ատեն տուաւ իր հայրական յորդորները՝ շրջանաւարտ սան-սանուհիներուն։ Հանդէսը փակուեցաւ Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր աղօթքով։

---

### ԹԵՄԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ
### ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ

Ամսոյս 10ին, Նորին Ամենապատուութիւնը ընկերակցութեամբ Ս. Աթոռիս Լուսարարապետ Հոգ. Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեանի, թեմական այցելութեամբ մեկնեցաւ դէպի Անդր-Յորդանան։ Մինչև Սուվէյլէ գիւղը Ն. Ամենապատուութեան ընդառաջ եկած էր պատուիրակութիւն մը գլխաւորութեամբ Անդր-Յորդանանի Հոգ. Հովիւ Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեանի, որուն կ'ընկերակցէր նաև Անդր-Յորդանանի կառավարութեան ներկայացուցիչ Սուպհի Պէյ Թուքան։ Ս. Պատրիարք Հայրը ընդառաջողները ողջունելէ ետք շարունակեց իր ընթացքը մինչև Ամման և հիւրընկալուեցաւ Տիար Հայկ Փէլթէքեանի տան մէջ, ուր պատուասիրուեցան ներկաները և ընդունեցին Սրբազան Հօր օրհնութիւնները։ Նախապէս եղած կարգադրութեան մը համաձայն Նորին Ամենապատուութիւնը իր բնակութիւնը հաստատեց Ամմանի Իտալական Հիւանդանոցին մէջ։ Ս. Հայրը Ամման գտնուած միջոցին պաշտօնական այցելութիւն տուաւ Անդր-Յորդանանի Վեհ. Աբտուլլա Թագաւորին, որ ունեցաւ աւելի քան կէս ժամոց ունկընդրութիւն մը Ն. Ամենապատուութեան հետ։ Ն. Ամենապատուութեան կ'ընկերանային Հոգ. Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան, Տեարք Հայկ Փէլթէքեան և Սերովբէ Անթիքաճեան։ — Յետագայ օրերուն, ընկերակցութեամբ Տիար Հայկ Փէլթէքեանի, այցելեց նաև Գահաժառանգ Էմիր Թալալի, և Նորին Վսեմ. հետ ունեցաւ 45 վայրկեանի սիրալիր տեսակցութիւն մը։ Ներքին Գործոց Փոխ Նախարար՝ Սայիտ Փաշա Միւֆթիին, Արտաքին Գործոց Նախարար՝ Թաւֆիք Փաշային, Ընդհ. Զօրաց Հրամանատար՝ Ապտըլ Քատէր Փաշային և Անգլիացւոց տեղւոյն Փոխ Հիւպատոսին։

Ամսոյս 7ին, ի պատիւ Ն. Ամենապատուութեան ճաշկերոյթ տրուեցաւ Մեծ. Տիար Հայկ Փէլթէքեանի կողմէ իր տան մէջ, ուր ներկայ էին նաև Արտաքին Գործոց փոխ-Նախարար Սայիտ Փաշա, Անդր-Յորդանանի Զօրաց Ընդհ. Հրամանատար Ապտըլ Քատէր Փաշա, Ամմանի Կառավարիչ Սըլտգի պէյ, Գեր. Տ. Դերենիկ Եպս. Փոլատեան, Լուսարարապետ Հոգ. Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան և տեղւոյն այլ երևելի ազգայինները։

Օգոս. 14ին, ուրիշ ճաշկերոյթ մը տրուեցաւ ի պատիւ Ս. Պատրիարք Հօր Տիար Ս. Անթիքաճեանի կողմէ, ուր ներկայ էին, դարձեալ, նոյն վսեմ. Նախարարները և բարձրաստիճան պաշտօնատարները և հայազգի երևելիներ։

Իսկ Օգոս. 18ին, ճաշկերոյթ մը ևս Պ. Լևոն Գէորգեանի կողմէ, ուր ներկայ էին Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան, Տեարք Հայկ Փէլթէքեան, Սերովբէ Անթիքաճեան, Յ. Պէրպէրեան, Գ. Պալեան և Գ. Գրիգորեան։

21 Օգոս. Կիրակի, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ Ս. Պատարագին մեր ժամատան մէջ, և քարոզեց Ս. Պատարագի արարողութեան ընթացքին։

Նորին Ամենապատուութիւնը հետզհետէ ընդունեց նաև այցելութիւնները Արտաքին Գործոց Փոխ Նախարար՝ Թաւֆիք Փաշային, Անդր-Յորդանանի Զօրաց Ընդհ. Հրամանատար Ապտըլ Քատէր Փաշային, Երուսաղէմի Նախկին կառավարիչ՝ Ապտալլա Պէկ Էլ-Թէլին, Անգլիացւոց Ամմանի Փոխ-Հիւպատոսին, Պաղեստինի և Սուրիոյ Պապական Գեր. Նուիրակին, Երուսաղէմի Ֆրանչիսկեանց Գեր. Կիւսթոտին, Երուսաղէմի Անկլիքան Եպիսկոպոսին, Ամմանի Յոյն Կաթոլիկներու Եպիսկոպոսին, Ամմանի Ֆրէրներու Մեծաւորին, Բողոքական Եկեղեցւոյ Մեծաւորին և զանազան յարգելի ազգայիններու։ — Ս. Պատրիարք Հայրը Երուսաղէմ վերադարձաւ 27 Օգոստոս Շաբաթ առաւօտ։

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Hagop Vartanian, Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.